Արձանագրություն N 2
«ՏԿՆ-ԲԸԱՀԾՁԲ-16/25 ԱՎ» ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«13» հուլիսի 2016թ.
ժամը՝ 09:30

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ք. Քաբաբյան

Հանձնաժողովի անդամներ՝ Լ. Հարությունյան, Վ. Սարգսյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Մկրտչյան

I. Ընթացակարգի հայտերի բացման մասին

1. Ընդունել ի գիտություն, որ.

ա) հայտեր են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

1.	«ԱՌԹԱ» ՍՊԸ	-	ՀՀ, Երևան 0010, Թումանյան փող. 38/65 ՀՎՀՀ 02616983 , Հեռ.՝ 010 545 001, 099 545 011, 094 545 011, E-mail: info@artatour.am, URL: www.artatour.am
2.	«Լինկ Տուր էյր» ՍՊԸ	-	ՀՀ, ք. Երևան, երևան, Աղայան 9, բն. 75, ՀՎՀՀ 02630553 հեռ. +374 60 50 03 00, +374 99 57 64 56, +374 98 57 64 5,6 E-mail: linktuor@mail.ru

բ) մասնակիցների կողմից առաջարկված գները հետևյալն են.

N	Մասնակցի անվանումը		
		Առաջարկված գինը (ՀՀ դրամ)	ԱԱՀ (ՀՀ դրամ)
1	2	3	4
1.	«ԱՌԹԱ» ՍՊԸ*	856401	-
2.	«Լինկ Տուր էյր» ՍՊԸ*	864000	-

Մասնակիցները ավելացված արժեքի հարկ վճարող չեն:
Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

2. Հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները, համակարգողը ամփոփեց մասնակիցների հայտերի գնահատման արդյունքները.

- հայտերը գնահատվել են «ՏԿՆ-ԲԸԱՀԾՁԲ-16/25ԱՎ» ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգի հրավերով սահմանված կարգով: Հրավերով սահմանված՝ հայտերի կազմման և ներկայացման, բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և դրանց համապատասխանությունը ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին համապատասխանում են «ԱՌԹԱ» ՍՊԸ-ի և «Լինկ Տուր Էյր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը և գնահատվել են «Բավարար»:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

3. Ընդունել ի գիտություն, որ հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

4. Հանձնաժողովը որոշեց.

- ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 74-րդ կետի 1-ին ենթակետի գ) պարբերության համաձայն «ԱՌԹԱ» ՍՊԸ-ի և «Լինկ Տուր Էյր» ՍՊԸ-ի ներկայացուցիչների հետ կազմակերպել ներկայացված գների նվազեցման միաժամանակյա բանակցություններ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

5 Ընդունել ի գիտություն, որ բանակցությունների արդյունքում ներկայացված գների փոփոխություն տեղի չի ունեցել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

6. Հանձնաժողովը որոշեց.

- ընտրված մասնակից ճանաչել բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով՝ « ԱՌԹԱ » ՍՊԸ-ին:

7. «ՏԿՆ-ԲԸԱՀԾՁԲ-16/25ԱՎ» ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագրերի կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրը ժամը 10:00-ին, ՀՀ ք. Երևան, Նալբանդյան 28, ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն 4-րդ հարկ, N419 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

Հանձնաժողովի
նախագահ՝ _____ Ք. Քաբաբյան

անդամներ՝ _____ Լ. Հարությունյան

_____ Վ. Սարգսյան

Քարտուղար՝ _____ Ա. Մկրտչյան